«ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԲՀԿ-ի 2022 թ.
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Մնացորդ առ 01.01.2022 թ. դրությամբ՝ 2.425.000 դր.

2022 թվականին կազմակերպությունը ստացել է ֆինանսական աջակցություն 36.737.082 դրամի չափով։

Ծախսեր.

Աշխատավարձ՝ ներառյալ հարկեր – 6.061.298 դր.

Կոմունալ և գրասենյակային ծախսեր – 213.170 դր.

Բանկային վճարումներ – 270.116 դր.

Ծրագրային ծախսեր – 30.917.480 դր.

Ընդամենը՝ 37.462.064 դր.

Երևանի Զարգացման կենտրոն։ Կենտրոն են այցելում սոց. անապահով, ծնողազուրկ, բռնության ենթարկված երեխաները։

Կենտրոնում գործում են պարի, նկարչության, թատերական, տիկնիկագործության, օտար լեզուների՝ անգլերեն և ռուսերեն, հայոց լեզվի խորացված ուսուցման, քանդակագործության խմբակները։ Երեխաները տիրապետում են նաև համակարգչին, մոնտաժային ծրագրին, որի շնորհիվ կարճամետրաժ ֆիլմեր են պատրաստում։ Կազմակերպվում են նաև մարզման կուրսեր ու դասընթացներ ծնողների համար։ Կազմակերպվել են երեխաների և նրանց խնամակալների աշխատանքները ներկայացնող ցուցահանդեսներ, բաց դասեր՝ անգլերեն, ռուսերեն, «Աշխարհն իմ շուրջը» առարկաներից։ Բեմականացվել է «Ո՞վ է իսկական ընկերը» ներկայացումը կրտսեր խմբի երեխաների մասնակցությամբ և «Ոսկեփետուր ագռավը» նեկայացումը ավագ խմբի երեխաների մասնակցությամբ։ Կազմակերպվել են սպորտային խաղեր, վիկտորինաներ, այցելություններ մշակութային կենտրոններ, էքսկուրսիա ք. Գյումրի։

Ստեփանավանի Զարգացման կենտրոն։ Կենտրոն են այցելում ք. Ստեփանավանի և Ուռուտ գյուղի սոց. անապահով, ծնողազուրկ, բռնության ենթարկված երեխաները։

Կենտրոնում գործում են պարի, նկարչության, թատերական, օտար լեզուների, շախմատի խմբակները։ Կազմակերպվել են սպորտային խաղեր, վիկտորինաներ, ճամբարներ, թատերական ներկայացումներ։ Երեխաները դեկտեմբերին տոնական զարդարված Երևանում էին։ Հրաշալի օրեր անցկացրին Ամանորյա Երևանում։

Արագածավանի Զարգացման կենտրոն։ Կենտրոն այցելում են սոց. անապահով, ծնողազուրկ, բռնության ենթարկված երեխաները։ Կենտրոնում գործում են պարի, նկարչության, թատերական, վոլեյբոլի, թենիսի, ֆուտբոլի խմբակները։ Կազմակերպվել են ճամբարներ, միջոցառուներ, սպորտային խաղեր, թատերական ներկայացումներ, այցելություն Երևան՝ մանկական ժամանցային կենտրոններ, Yerevan Park։ Երեխաները դեկտեմբերին տոնական զարդարված Երևանում էին։ Հրաշալի օրեր անցկացրին Ամանորյա Երևանում։

Ճամբարակի Զարգացման կենտրոն։ Կենտրոն այցելում են սոց. անապահով, ծնողազուրկ, բռնության ենթարկված երեխաները։ Կենտրոնում գործում են նկարչության, թատերական, շախմատի խմբակները։ Կազմակերպվել են ճամբարներ, միջոցառուներ, սպորտային խաղեր, թատերական ներկայացումներ։

Օգնություն սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց։ Կազմակերպվել են սիստեմատիկ այցելություններ, տոնական միջոցառումներ, ինչպես նաև էքսկուրսիաներ՝ քաղաքից դուրս։

Ամսական նպաստի տրամադրում ծնողազուրկ երեխաներին, սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց, որբեվարիներին։

Օգնություն սոց. անապահով ընտանիքներին։
Տրամադրվել են ֆինանսական և սննդի օգնություն, ինչպես նաև՝
կենցաղային ապրանքներ և օգտագործված կահույք։

Տնօրեն՝ Գ. Հակոբյան

18.03.2023 թ.